Վերապատուելի հօր մերում Զաքարիայ վարդապետին
ողջոյն բազում յոյժ

... մուտ արարաք ի հայոց ժամն յաւուր վերափոխման սուրբ աստուածածնին։ Եւ առաքեցի նոցա քարոզիչ մասնաւոր ի մերոց. և ժողովեալ գրեթէ ամենայն հայոց յեկեղեցին՝ տուաւ նոցա քարոզ յաղագս միաբանութեան՝ յաւուրս երկուս ընդ ժամս ձիգս. այնչափ, մինչև ժողովուրդն լուծաւ, մեղկացաւ, միաբանեցաւ. դարձեալ կարկատեցաւ բազմապառակ հերձումն նոցա. և անպատմելի ցնծութեամբ խայտային. մինչև չժուժեալ յանձինս՝ գրեթէ ամենայն հայք մեծամեծք և փոքունք միաբանեալ եկին ի վանս մեր՝ և աբարին միմեանց զհասարակաց խրախճան՝ ի գրքատան մերում, առ չտանելոյ սենեկաց զբազմութիւնն. կոչեալ էին ընդ ինքեանս և զերկոսին զեպիսկոպոսունս մեր զմինաս և զսարգիս, որք և նոքա պառակտեալք էին ի միմեանց և ոխացեալք, և զտան ըստ տնօրինելոյ տեառն հասարակաց քարոզութեանն ներկայք, և տերամբ շահեցան յոյժ. զի և նոքա հաշտեցան։ Եւ դարձեալ առաքեցի զքարոզիչ մասնաւոր ի ծնընդեան սուրբ աստուածածնին, որ արար նոցա ներբողեան մեծ՝ զսուրբ աստուածածնէն՝ ներկայութեամբ սարգիս վարդապետին և բաղձանօք մինաս վարդապետին, զի փափագէր ներկայ գտանիլ և ինքն. բայց՝ ի նախընթաց գիշերին ախտացան երեսք նորա, զի եկն պատահական ուռոյց ինչ և արգելաւ. և ժողովուրդն խոնեցաւ զեկեղեցեաւ. և տեառն գործակցութեամբ մեծապէս շահեալ՝ խայտային, և փոխեաց զնոսա տէր գրեթէ յայլ մարդ. և ասեն. այժմ իմացաք, թէ ունինք մեք հայքս ի վենետիկ զվանք։...

Յամի Տեառն 1751
Սեպտեմբերի 11
[*Վենետիկ*]

Նուաստ ծառայ
Ստեփաննոս Վրդ. Աբբահայր

ՃԾԵ.

Կը կարդանք հետեւեալ թուղթին մէջ կարեւոր ձեռնարկ մը Եղիսաբեթուպոլիս քաղաքի հայերուն կողմանէ։

Յարգոյապատիւ և գերապայծառ տեառն Ստեփաննոսի վարդապետի
և Աբրահոր խնդալ

... Յոյժ ուրախացան և շնորհակալ են մերայինք վասն ընդունելութեանն, զոր արարեալ էք հաճի Աստուածլահին...։ Վասն արգուհալին պատասխանւոյ ոչ գոյ ինչ տակաւին բան նոր ի մեծամեծաց...։ Խնդրեմ յորժամ գայցէ այտի առ մեզ հաճի Աստուածլահն, առաքեսջիք ընդ նմա զքանի մի պատկեր աշխարհացուցին եզերեցելոյ, և զվանքին պատկերն եթէ եզերեալ է...։ Վասն մինաս վարդապետին մեր փլեպանուշին յայտ լիցի, զի նա վասն աղաչանաց քաղաքին եղիսաբեթապոլսեցւոց կայ աստ յաղերս մաղթանաց, և հայցէ ի թագաւորութենէս տալ ինքեանց երկիր արծաթոյ առ քաղաքաւն իւրեանց, այսինքն անդաստանս և գեօղս, որպէս ունին արմենոպոլսեցիք. և յօժար է վարդապետն տալ ի գին իբրև յիսուն հազար զօլաթայ ի քաղաքին կողմանէ, բայց դժու[ար]ին է հաճել զմիտս մեծամեծաց քաղաքիս։ Քանզի այնմ հակառակք կան սակաւք, որք կամին ինքեանք առնուլ զմեծ և զլաւ մասն։ Վասն այսորիկ վարդապետն հանապազ երթայ ի դրունս մեծամեծաց, և յայն սակս եղ զփայտ ի տան իւրում վասն ձմերան և մնայ յայս ձմեռն աստ, թէպետ և երբեմն յուսահատեալ կամէր դառնալ յետս։...

Յամի տեառն 1751 *նոյեմ.* 27
ի Վիեննայ

Անպիտան ծառայ
Հայր Իգնատիոս վարդապետ Խաչատուրեան
ի կարգէ սրբոյն Անտոնի Աբբայի